



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 20, 2021

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի հայրենակիցներ, մենք այսօր գտնվում ենք աղետալի իրավիճակում. մասնավորապես՝ պետական և կենսական կարևորության հրատապ, բայց անպատասխան հարցեր, չարդարացված սպասումներ, փխրուն անվտանգություն, խարխիված ներքաղաքական վիճակ, անտեսված և արժեզրկված քաղաքացի:

ՊԵՏՔ Է ԲԵԿԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ: ՄԵՆՔ ԿԱՌՈՂ ԵՆՔ, ՀԵՏԵՎԱԲԱՐ՝ ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ:

Մենք առաջնորդվում ենք այն սկզբունքով, որ ՄԻՐԵԼՈՒՑ ԲԱՑԻ ՊԵՏՔ Է ՏԵՐ ԼԻՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ: Մենք պատրաստ ենք ՏԵՐ լինել մեր երկրին՝ գիտակցելով, որ ՏԵՐ լինելն առաջին հերթին ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ է, հետո նոր՝ իրավունք:

Մեզանից յուրաքանչյուրն իր տեղն ու դերն ունի պետականաշինության գործընթացում և մեր պարտքն է գիտակցել դա: Քաղաքացին համարում է, որ ինքը ոչինչ չի կարող անել, քանի որ «0» է, իսկ գորավար Անդրանիկն ասում է. «...Եթե ես «1» եմ, ապա քո «0» մեզ կդարձնի «10», քո ընկերոջ «0» մեզ կդարձնի «100», իսկ միանալով մենք կդառնանք «միլիոններ»...»:

Աստված ոչ մի ազգին հայրենիք չի պարգևել, տվել է բնակավայր և ասել. «Եթե ունակ ես, հայրենիք դարձրու»: Աստված ազգերին երջանկություն ու ցավ չի բաժանել, մեր բաժին արեզակից, մեր բաժին հող ու ջրից մենք ենք հունցել մեր ցավն ու խնդությունը, **ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՏԵՐԸ:**

ՄԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՆՔ ԱՅՆՊԻՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՄՏԱԾԻ ԻՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԵՐԵԼՔ կուսակցության առաջնահերթություններից է պետության անվտանգությունը, որի գրավականը կդառնա նոր սերնդի արմատապես վերակազմավորված և վերագինված բանակը: Բանակը հասարակության հայելային արտապատկերումն է: Ստեղծելով կարգապահ և պրոֆեսիոնալ բանակ, որն ունակ կլինի մարտական գործողություններ վարել հակառակորդի տարածքում՝ մենք հնարավորություն կունենանք դիմակայել պետական և ազգային անվտանգությանն ուղղված գլոբալ և տարածաշրջանային մարտահրավերներին:

Պետության անվտանգության, քաղաքական, տնտեսական և հասարակական առաջընթացի գրավականը Հայաստանի և Արցախի Հանրապետությունների պետական կառույցների կայուն զարգացումն է:

Պետականաշինության բարեփոխումներում կարևորում ենք Հայաստան-Սփյուռք համագործակցության շարունակական զարգացումն ու արդյունավետացումը: Այդ իսկ պատճառով հարկ ենք համարում ձևավորել խորհրդարանի բոլորովին նոր ձևաչափ: Մենք՝ որպես ՀԱՅՐԵՆԻՔ մեր ներդրումը պետք է ունենանք Սփյուռքի մեր եղբայրների ազգային ինքնության պահպանման և համահայկական շահերի պաշտպանության գործում:

ՎԵՐԵԼՔ կուսակցության վարչապետի թեկնածուն ԱԼԵՔՍԱՆ ՄԻՆԱՍՅԱՆՆ Է

ՎԵՐԵԼՔ կուսակցության ծրագրային դրույթներ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Մարդը ստեղծվել է ազատ՝ ապրելու և արարելու համար: Հայաստանի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը զբաղեցնում է կուսակցության առաջնահերթությունների առաջին հորիզոնականը:
- Հայաստանը պետք է դառնա ինքնիշխան, ուժեղ, ժողովրդավարական, սոցիալական, իրավական և քաղաքացիակենտրոն պետություն: Ժողովրդավարություն, որի հիմքը ռացիոնալ ինտելեկտուալությունն է, ինչը կբացառի ամբոխավարության վճռորոշ նշանակությունը:
- Հիմնական արժեքները՝ ազատությունը, արդարությունը և համերաշխությունը, ինչպես նաև սոցիալական արդարությունը հանդիսանում են մեր գաղափարախոսության հիմնական, անփոփոխ և անբաժանելի հենքը:
- Հայկական բարձրավանդակը հայ ժողովրդի բնօրրանն ու հայրենիքն է: Կենսունակ պետության կերտումը յուրաքանչյուր հայի գերնպատակը, բաղձանքն ու ձգտումը պետք է լինի: Հայ է համարվում հայկական ինքնություն ունեցող յուրաքանչյուր ոք, անկախ բնակության վայրից, դավանական և այլ պատկանելությունից:
- Հայ ազգային մշակութային ժառանգությունը, Հայ Առաքելական Եկեղեցին և հայոց լեզուն ունեն իրենց քաղաքակրթածին նշանակությունը: Մենք ընդունում ենք հայ ժողովրդի հոգևոր և աշխարհիկ կյանքում Հայ Առաքելական Եկեղեցու շուրջ 2000ամյա բացառիկ ներդրումն ու վաստակը և մտադիր ենք ըստ ամենայնի աջակցել նրան, Հայ Առաքելական Եկեղեցին համարելով հայ ժողովրդի հոգևոր սնուցման և կրոնական դաստիարակության միակ և անփոխարինելի հաստատությունը:
- Հայոց լեզվի անաղարտության պահպանումն ու զարգացումը պետության և յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունն է: Դասական ուղղագրությունը, գրական արևելահայերենը և արևմտահայերենը համարվում են պետական լեզվի համարժեքն հավասարազոր բաղկացուցիչները:
- Ազգային արժանապատվության գիտակցումը յուրաքանչյուր հայի գերնպատակը պետք է լինի:
- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության արտաքին անվտանգության շարունակական ամրապնդումն ու պետականության ինստիտուտների կայուն զարգացումը ողջ հայ ժողովրդի իրավունքների և շահերի պաշտպանության խնդիրն է՝ անվտանգության, քաղաքական, տնտեսական և հասարակական առաջընթացի գրավականը:

- Հայ մարդու, անկախ նրա բնակության վայրից, ֆիզիկական և հոգևոր անվտանգության պատասխանատուն, ինչպես նաև նրա արժանապատվության երաշխավորը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը: Անչափ կարևոր է Հայաստան-Միյուոք համագործակցության շարունակական զարգացումն ու արդյունավետացումը: Միյուոքում ազգային ինքնության պահպանումը հանդիսանում է համահայկական շահերի պաշտպանության, հայ ժողովրդի համաշխարհային դիմադրողականության բարձրացման անփոխարինելի գրավական:
- Տնտեսությունը պետք է կառուցվի ազատ, սոցիալական շուկայական տնտեսական հարաբերությունների հիմունքներով: Հայաստանի տնտեսության հիմնական բաղադրիչը պետք է լինի արդյունաբերությունը, ՏՏ ոլորտը և այլն:
- Պետք է հաստատել պետական քաղաքականություն, որը վեր կլինի քաղաքացու կուսակցական պատկանելիությունից, հնարավորություն կտա յուրաքանչյուրին իր պրոֆեսիոնալ կարողություններն ի նպաստ բերել պետականությանը և ազգաբնակչության բարեկեցությանը:
- Պետության դերակատարությունը տնտեսական հարաբերություններում պետք է լինի որոշիչ և վճռական՝ կարգավորման և առանցքային՝ շուկաների հայթայթման և հաղորդակցության ուղիների անխափան գործունեության առումով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Մենք հայտարարում ենք մեր հավատարմությունը ՀԻՄՆԱՐԱՐ և ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ՝ ազատությանը, արդարությանը և համերաշխությանը: Այդ իսկ պատճառով էլ մարդու մասին մեր ըմբռնումը միաժամանակ հանդիսանում է և հիմք, և չափանիշ:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

- Մարդն ազատ է: Նա ծնվում է ազատ ապրելու և ստեղծագործելու համար: Որպես բարոյական էակ, նա պետք է ի վիճակի լինի կայացնելու բանական ու պատասխանատու վճիռներ և իրականացնելու համապատասխան գործողություններ:
- Ով ազատություն է պահանջում իր համար, նա միանշանակ պետք է ընդունի շրջապատողների ազատությունը: Ազատությունը ներառում է իրավունքներ և պարտականություններ:
- Քաղաքականությունը կոչված է մարդկանց ապահովել ազատության անհրաժեշտ աստիճանով:
- Ազատության իրականացումը նախատեսում է սոցիալական արդարության առկայությունը: Այն պայմանները, որոնցում մարդը ապրում է, չպետք է արգելք հանդիսանան ազատության սահմանափակման համար: Այդ պատճառով էլ քաղաքականության խնդիրն է, դիմակայել զրկանքներին, վերացնել մարդու անբնական կախվածությունը և ազատության ապահովման համար ստեղծել անհրաժեշտ նյութական պայմաններ:
- Անհատի ազատ բացահայտումը իրականացվում է առավել արդարացի բաշխված հնարավորությունների ու բարիքների հենքի վրա:
- Իրական կյանքում ազատությունն իրականացվում է անհատական և կոլեկտիվ պատասխանատվության միջոցով:
- Քաղաքացին կոչված է գիտակցել և կիրառել ազատությունը ընտանիքում, մերձավորների հետ հարաբերություններում, աշխատանքի վայրում և ժամանցը կազմակերպելիս, ինչպես նաև համայնքի ու պետության մասշտաբով: Նա պետք է մասնակցի ընտրություններին և զանազան կառույցների աշխատանքներին, պետք է կարողանա որոշումներ ընդունել՝ այդպիսով ստանձնելով պատասխանատվության իր բաժինը: Դատողության ինքնուրույնությունը և պատասխանատու համագործակցությունը նրան պաշտպանում են բռնապետական համակարգի զոհ դառնալուց:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

- Արդարության հիմքը բոլոր մարդկանց հավասարությունն է, հարգանքը նրանց արժանապատվության և ազատության հանդեպ, անկախ իշխանությունից և որևէ անհատի ընդունակություններից ու թերություններից:
- Արդարություն՝ նշանակում է հավասար իրավունքներ բոլորի համար, ներառյալ նրանց, ովքեր օգնության կարիք ունեն իրենց իրավունքներն իրականացնելու համար: Իրավունքը մարդկանց պաշտպանում է կամայականություններից և իշխանության չարաշահումից: Իրավունքը ազատություն է ապահովում նաև թույլերի համար:
- Արդարությունը հավասար հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուրին ազատ ինքնաբացահայտման համար:
- Բացարձակ արդարությունն անհասանելի է: Եվ չնայած մարդկային ջանքերով աշխարհը չի կարող կատարելության հասնել, այդուհանդերձ առաջընթաց հնարավոր է: Մենք հայտարարում ենք առավելագույն ջանքերի գործադրման անհրաժեշտության մասին, որոնք ուղղված են յուրաքանչյուր մարդու կենսական նորմալ պայմաններով ապահովելուն:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

- «Համերաշխություն» նշանակում է փոխադարձ կապվածություն, որը բնորոշ է անհատի ու հանրության փոխհարաբերություններին: Համերաշխությունը մարդկանց մերձեցնում է միմյանց՝ հանդիսանալով ցանկացած հանրության հիմքը: Համերաշխությունը մարդու սոցիալական էության արտահայտությունն է:
- Համերաշխությունը պահանջում է անձնական մասնակցություն՝ նրան հաղորդելով սոցիալական իմաստ:
- Մենք հայտարարում ենք մեր կողմնակցությունը անհատի և հանրության փոխադարձ պատասխանատվությանը, որը հավասարապես հեռու է ինչպես անսահման անհատապաշտությունից, այնպես էլ կոլեկտիվիզմից:
- Սոցիալական ապահովությունը հիմնվում է համերաշխության հիմնարար սկզբունքի վրա: Համատեղ են հաղթահարվում այն դժվարությունները, որոնք ի վիճակի չեն հաղթահարել միայնակ անհատները:
- Ամեն ոք իր աշխատանքով և իր աշխատանքի պտուղներով նպաստում է նրան, որ հանրությունը կարողանա հոգ տանել առանձին վերցրած յուրաքանչյուր անհատի համար: Սոցիալական ապահովությունն ունի խաղաղարար և ազատարար ազդեցություն: Համերաշխությամբ կանխվում է սոցիալական ապահովության համակարգի չարաշահումը:
- Համերաշխությունն ամենից առաջ անհրաժեշտ է այնտեղ, ուր նրա իրականացումը կապված է դժվարությունների հետ: Այդ

խնդիրը դրսևորվում է տալիս մարդկային հարաբերություններում, թշնամաբար տրամադրված սոցիալական ուժերի միջև համագործակցություն հաստատելու փորձերում, ժողովուրդների փոխհարաբերություններում, և ամենից առաջ, համաշխարհային և միջպետական մասշտաբով հարցեր լուծելիս:

Հիմնական արժեքները չեն ենթարկվում որևէ կուսակցության քաղաքականությանը, այլ ծառայում են մարդու շահերին և ընդհանուր բարեկեցությանը՝ ամբողջությամբ վերցրած: Հիմնական արժեքների գործնական իրականացումը կախված է ազատ քաղաքացիների կամքից ու ժողովրդավարական ընթացքից:

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԻՆՔՆԻՇԻՎԱՆ, ՈՒՇԵՂ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԵՆՏՐՈՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Սահմանադրությունը պետք է դառնա մեր ժողովրդի համատեղ կյանքի հիմքը՝ տոգորված ազատության, արդարության և համերաշխության ոգով:
- Հիմնական արժեքները կարող են միս ու արյուն ստանալ միայն ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում, որի երաշխիքը միայն Սահմանադրությունն է:
- Հայաստանի Սահմանադրությունը պետք է հենվի հիմնական արժեքների մասին պատկերացումների հզոր հենքի վրա: Պետության պատրաստակամությունն է ապահովել այդ արժեքների նկատմամբ հարգալից վերաբերմունք և խափանել ամեն տեսակի փորձերը քայքայելու կամ խարխուլելու արժեքների այդ աստիճանակարգը:
- Մեր պետությունը պետք է դառնա քաղաքացիների այնպիսի միասնություն, որոնք ազատ պատասխանատվություն կկրեն միմյանց հանդեպ: Պետության հեղինակությունը բխում է պետության հավատարմությունից քաղաքացիների մարդկային արժանապատվության և հիմնական իրավունքների նկատմամբ, քանի որ այդ քաղաքացիներն են ստեղծել պետությունը ու ապահովում նրա գոյությունը:
- Պետության վրա է դրված առանձին քաղաքացիների և ամբողջությամբ վերցրած հասարակության բարեկեցության ապահովման ու բազմապատկման խնդիրը, որի համար պետությունն առաջին հերթին պարտավոր է.
 - պաշտպանել քաղաքացիների իրավունքները և կանխել իշխանության չարաշահումը,
 - պահպանել և կատարելագործել մարդկային համակեցության համար անհրաժեշտ կարգը,

- ապահովել հասարակական ուժերի բազմազանությունը,
- նպաստել անհատի բազմակողմանի բացահայտմանը և հասարակական բարիք ստեղծելու գործում նրա պատրաստակամությունը՝ կրելու կոլեկտիվ պատասխանատվություն,
- պաշտպանել թույլերին, մարդկանց գոյության համար ապահովել անձնական հոգատարության և համերաշխության մթնոլորտ, ինչպես նաև մասնակցել հասարակական կառույցների ձևավորմանը,
- ժողովրդին պաշտպանել արտաքին սպառնալիքից և ներկայացնել քաղաքացիների և հայերի օրինական շահերը այլ պետությունների հետ հարաբերություններում,
- սեփական ավանդը ներդնել աշխարհում մարդու արժանի կենսապայմանների ստեղծման գործում:
- Ժողովրդավարական համակարգում ամբողջ պետական իշխանությունը որոշվում է ժողովրդի քվեով: Պետական իշխանությունը կոչված է գործել հանուն ժողովրդի բարօրության:
- Կուսակցությունը ժողովրդավարությունն ընկալում է որպես հարաշարժ, մշտապես ամրապնդվող ու խորացող քաղաքական կարգ, որն ապահովում է քաղաքացիների ակտիվությունը՝ ամրապնդելով նրանց ազատությունն իշխանության բաշխման ու վերահսկման գործընթացում: Այդ կարգը պետք է հասու ու հասկանալի լինի յուրաքանչյուր անհատի: Այն իրականանալի է միայն այն դեպքում, երբ քաղաքացիները պատասխանատվություն են զգում նրա ձևավորման համար՝ միաժամանակ, ցուցաբերելով ակտիվություն և ինքնազոհողության դիմելու պատրաստակամություն: Ժողովրդավարական կառավարումը ժամանակային առումով սահմանափակված չէ:
- Ժողովրդավարական պետությունն ընդունակ է կատարել իր վրա դրված խնդիրները միայն այն դեպքում, եթե այն ապահովված է քաղաքական ղեկավարությամբ: Իր պատասխանատվությունը գիտակցող կառավարությունը պետք է պատրաստ լինի անհրաժեշտ որոշումներ ընդունելու նաև ի հակակշիռ հասարակական կարծիքի: Միայն սրան ընդունակ կառավարությունը կարող է ապահովել փոքրամասնությունների անվտանգությունը, իրականացնել անհրաժեշտ փոփոխություններ և պատասխանատվություն կրել ապագա սերունդների առջև:
- Առկա է ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցով Հայաստանի պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն: Մասնավորապես, անհրաժեշտ է հրաժարվել պետական ծառայության տարաբնույթ տեսակներից: Պետական ծառայությունը պետք է բաժանված լինի միայն զինվորական և քաղաքացիական ծառայության: Պետությանը անհրաժեշտ է արդյունավետ և Սահմանադրությանը հավատարիմ պետական ծառայություն: Պետական ծառայության պետք է ընդունվի միայն նա, ով պատրաստ է ցանկացած պահի հանդես գալ ի պաշտպանություն ազատ ժողովրդավարական կարգի:
- Մենք հայտարարում ենք մեր հավատարմությունը ներկայացուցչական ժողովրդավարությանը, որը քաղաքական

ղեկավարումը զուգակցում է ժողովրդավարական պատասխանատվության հետ: Ներկայացուցչական ժողովրդավարությանը համապատասխանում է ազատ մանդատը, որը կոչված է ապահովել ցանկացած պատգամավորի անկախությունը ինչպես կուսակցության շարքային անդամներից, այնպես էլ նրա ղեկավարությունից:

- Պետք է ապահովել հասարակական և այլ կարգի ոչ պետական կազմակերպությունների հաշվետվողականությունը և պատասխանատվությունը գերակա պետական շահի տեսանկյունով:
- Ընտրությունների համակարգն ապահովում է կառավարության փոփոխման մշտական հնարավորություն: Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածներում էլ այդ մեխանիզմը հնարավորություն է տալիս խորհրդարանի ու դատարանների միջոցով մշտապես վերահսկել կառավարության գործունեությունը: Այդպիսով, պետության համար խոչընդոտներ չստեղծելով հանդերձ, հիշյալ մեխանիզմը սահմանափակում է նրա գերիշխումը: Ազատ հասարակական կարծիքը հնարավորություն է տալիս վերահսկել իշխանությանը:
- Պատգամավորների խնդիրն է առաջնորդվելով անհատական պատասխանատվության ոգով, գործել կոլեկտիվ՝ ի շահ համընդհանուր բարօրության: Այդ խնդրի կատարման մասին պատգամավորը պարտավոր է տեղեկացնել ընտրողներին և իր կուսակցությանը:
- Մենք ապրում ենք բազմակարծիք հասարակության պայմաններում, որտեղ պետական իշխանության և հասարակության ձևավորման վրա ազդեցություն ունենալու համար նկատվում էզանազան կարծիքների, աշխարհայացքների ու շահերի պայքար: Կուսակցություններն իրենց դերը կատարում են բազմակարծիք հասարակության պայմաններում: Իշխանության գլուխ կանգնած կամ ընդդիմության մեջ գտնվող կուսակցությունները պետք է գործեն իրենց ընտրողների պատվիրաններին համապատասխան:
- Կառավարության գործողությունների նկատմամբ վերահսկողությունը, որ խորհրդարանական համակարգի պայմաններում հանդիսանում է խորհրդարանի խնդիրը, հիմնականում իրականացնում է ընդդիմությունը:
- Կուսակցություններն ի վիճակի են գտնվելու ժողովրդավարական բարձրության վրա միմիայն այն դեպքում, երբ, չնայած դաժան դիմակայությանը, նրանք ցուցաբերում են գոնե նվազագույն ժողովրդավարական համերաշխություն ու համաձայնություն: Նրանք պետք է կարողանան հասկանալ քաղաքացիների կոնկրետ հոգսերը: Կուսակցությունների ամբողջ գործունեությունը պետք է հասկանալի լինի քաղաքացիներին:
- Ժողովրդավարական պետությանն անհրաժեշտ են ազատ նախաձեռնություններ ու խմբեր, որոնք ակտիվացնում են առավել մեծ թվով քաղաքացիների լավատեղյակությունը, պատասխանատվությունն ու գործուն մասնակցությունը: Նման քաղաքացիական նախաձեռնությունները նպաստում են ժողովրդավարության աշխուժացմանը, նոր ազդակ հաղորդելով նրան: Քանի որ քաղաքացիական նախաձեռնությունները, որպես կանոն, արտահայտում են յուրահատուկ շահեր,

պատասխանատու քաղաքական գործիչների խնդիրը կայանում է նրանում, որ այդպիսի պահանջներին հաղորդեն ավելի լայն, ընդհանուր քաղաքական հնչեղություն: Քաղաքացիական նախաձեռնությունները չպետք է հավակնեն այնպիսի լիազորությունների, որոնց տիրում են ընտրովի պետական կառույցները:

- Ժողովրդավարական հասարակական կառույցներում ոչ առանձին քաղաքացիների և ոչ էլ խմբերի համար չեն կարող լինել իրավունքներ առանց պարտականությունների և ազատություն՝ առանց պատասխանատվության:
- Ազատ հասարակության պայմաններում միավորումներն ինքնուրույն են որոշում իրենց խնդիրները՝ գործող իրավակարգի շրջանակներում: Ազատության վրա հիմնված ժողովրդավարությունն այնպիսի քաղաքացիների կարիք է զգում, որոնք ունակ են ինքնուրույն մտածելու և որոշումներ կայացնելու:
- Ազատ հասարակությանը համապատասխանում է զանգվածային տեղեկատվության միջոցների բազմակարծությունը: Անհրաժեշտ է ապահովել ազատ մամուլի անկախությունն ու բազմազանությունը: Տեղեկատվության հաղորդման և կարծիքների բազմազանության համար առանձնահատուկ պատասխանատվություն է ընկնում հանրային ռադիոյի և հեռուստատեսության վրա: Մասնավոր ընկերությունների մասնակցությամբ ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակումը ժողովրդավարական հասարակարգի հիմնական բաղադրիչներից է:
- Չանգվածային տեղեկատվության միջոցների ազատ ձևավորումը և ցանկացած տեղեկատվության թույլատրելիության հնարավորությունը ժողովրդավարական պետության պահպանման պարտադիր պայմանն է:
- Պետական գաղտնիքը և անվտանգության խնդիրները, գիտատեխնիկական ստրատեգիական նշանակության հայտնագործությունները, մարդկանց մասնավոր կյանքի և օրենքով կարգավորվող նման այլ իրողությունները չեն կարող հրապարակվել ՋԼՄ-ի կողմից: Դա պետության անվտանգության և մարդու ազատ մասնավոր կյանքի հարցերի շրջանակն է և պետք է պաշտպանված լինի օրենքով:
- Տեղեկատվությունն ապահովում է հասարակական կարծիքի ձևավորումը և իշխանության արդյունավետ վերահսկողությունը:
- Իրավական պետությունն ապահովում է հիմնական արժեքների էությունը՝ արդարացի ու հուսալի իրավական նորմերի միջոցով կարգավորելով պետության առաջնայնությունները և քաղաքացիների համակեցությունը:
- Իրավական պետությունում հուսալիորեն պաշտպանվում են նաև թույլերի շահերը, քանզի բախումները լուծվում են ոչ թե ուժեղի կամքով, այլ օրենքին ու իրավունքին համապատասխան:
- Ազատությունն ու պետության հեղինակությունն իրար չեն հակասում, այլ լրացնում են միմյանց:
- Ինքն իրեն թշնամիներից պաշտպանել չկարողացող ազատ պետությունը հարվածի տակ է դնում իր քաղաքացիների ազատությունը: Պետության և նրա քաղաքացիների անվտանգության համար հարկ է պայքարել բոլոր հնարավոր

պետական-իրավական միջոցներով: Իրենց խնդիրները լուծելիս անվտանգության մարմինները հենվում են համաքաղաքացիների աջակցության և համերաշխության վրա:

- Իրավական պետությունն ապահովում է հիմնական իրավունքների, իշխանությունների տարանջատման, դատարանների անկախության և կառավարման ու արդարադատության իրականացման հանդեպ հարգանքը: Այս ամենը քաղաքացիներին պաշտպանում է կամայականությունից, պետության ամենագործությունից ու մեծամասնության բռնատիրությունից:
- Մենք ձգտում ենք քաղաքացիների ազատության ոլորտի ընդլայմանը, որպեսզի պետության կողմից թույլ չտրվեն սահմանափակումներ և նա մենատիրության չենթարկի այդ ոլորտներն ու չվերածվի ամբողջատիրական համակարգի:
- Մենք մերժում ենք ամբողջատիրական տիրակալության ցանկացած ձև, քանզի այն անհնարին է դարձնում ինքնորոշման ոգուն համապատասխան արժանի կյանքը:
- Մենք հանդես ենք գալիս անկախ դատարանների օգնությամբ համակողմանի իրավական պաշտպանության օգտին: Իրավախախտումները արժանի են անհապաղ և հետևողական պատժի: Դատավարությունները, որոնք կարող են տարիներ շարունակ ձգձգվել, քայքայում են իրավական պետության հիմքերը:
- Օրենքները, ենթաօրենսդրական ակտերը և իրավական հրահանգները պետք է շարադրվեն բոլորի համար հասկանալի լեզվով: Օրենքները պետք է ապահովեն քաղաքացիների ազատությունը, այլ ոչ թե սահմանափակեն նրանց գործողությունները:
- Իրավական պետությունն ու սոցիալական պետությունը փոխլրացնում են միմյանց:
- Սոցիալական պետությունը նպատակաուղղված է նախօրոք անհրաժեշտ համապատասխան նախապատրաստություններ տեսնելու մարդկանց կյանքի բոլոր կտրուկ փոփոխություններին դիմակայելու համար և անհատին ապահովագրելու հիմնական փորձություններից: Առանց կողմնակի օգնության բնակչության ճնշող մեծամասնությունն ի վիճակի չէ բավարար չափով դիմակայելու հիվանդություններին, գործազրկության ու ծերության հետ կապված դժվարություններին:
- Մենք հանդես ենք գալիս հանուն այն բանի, որպեսզի սոցիալական պետությունը ձևավորվի ոչ միայն ավելի բանական, տնտեսական, այլև մարդկային սկզբունքների վրա:
- Ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետությունն ամբողջությամբ կախված է իր քաղաքացիների ազատ մասնակցությունից և կոլեկտիվ պատասխանատվությունից, որոնք պետք է պատրաստ լինեն օրինապահության ու համագործակցության, ծառայելու և զոհողության:
- Մենք համոզված ենք, որ Հայաստանը հիմք ընդունելով իր քաղաքացիների դեպի ազատություն ունեցած ձգտումը, հավատարիմ՝ արդարության ու իրավունքի սկզբունքներին, կդառնա հայ ազգի ազատ, իրավական և սոցիալական պետությունը:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Անկախ պետականության շուրջ 30-ամյա ժամանակաշրջանում էականորեն չբարելավվեց նոր մտածելակերպի արմատավորումը: Դեռևս լիակատար կայացած պետություն չունենք: Պետության կայացումը նշանավորվելու էր մարդկանց բարոյահոգեբանական վերափոխմամբ, նոր տնտեսական կարգի հաստատման արդյունքով: Մակայն, հաստատված ազատական տնտեսական կարգը և անարդյունավետ սոցիալական քաղաքականությունը էլ ավելի աղճատեցին մարդկանց բարոյահոգեբանական կերպարը:

Հայաստանի տնտեսությունը, համաշխարհային տնտեսության, առայժմ փոքրիկ մասնիկը լինելով հանդերձ, պետք է ինտեգրվի նրան և բնականաբար կրի նաև նրա ազդեցությունը: Համաշխարհային նոր կարգի ստեղծման ձգտումը, որը խոշոր տերություններին մտահոգող և նոր հարաբերությունների հաստատման հիմք է դրել, նաև որոշ պարտավորություններ է դնում Հայաստանի վրա:

Հայաստանը պետք է օգտագործի իր ժողովրդի մտավոր ունակությունների պաշարն ու ներուժը և կարողանա արագ ստեղծել սոցիալական շուկայական տնտեսություն՝ այդպիսով իր նպաստը բերել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը:

Այդ պատճառով էլ Հայաստանում անհրաժեշտ է հաստատել սոցիալական շուկայական տնտեսական համակարգ՝ որպես մեր ժողովրդի նկարագրին հարիր ու բարձր կենսամակարդակ ապահովող լավագույն միջոց և երաշխիք: Հայաստանի տնտեսական քաղաքականության նպատակներ պետք է դառնան սեփականության իրավունքի պաշտպանությունը, ձեռնարկատիրությանն օժանդակումը և գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծումը:

2.1. ԱԶԱՏ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐ

- Սոցիալական շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքները մշակվել են հանուն այն բանի, որպեսզի արդյունաբերացման և աշխատանքի բաժանման դարաշրջանում ազատությունը հասու լինի բոլորին, ինչպես նաև արթնացնելու բարոյական պատասխանատվության գիտակցումը և արդյունավետորեն իրականացնելու այն: Այդ ամենը հանգեցնում է նրան, որ առաջանում է կոլեկտիվ պատասխանատվություն մերձավորի նկատմամբ և հասարակության բարօրության համար՝ ընդհանրապես:
- Սոցիալական շուկայական տնտեսությունը տնտեսական և հասարակական քաղաքական ծրագիր է, որն ընդգրկում է հասարակության բոլոր խավերի շահերը:

- Սոցիալական շուկայական տնտեսության հիմքը անձնական նախաձեռնությունն է, որի ակտիվությունը ապահովում է հասարակական ու տնտեսական առաջընթաց: Հասարակական քաղաքական նպատակով էլ որոշվում են բոլոր տնտեսական, ֆինանսական և սոցիալքաղաքական լուծումները:
- Պետությունն իր վրա չպետք է վերցնի այնպիսի խնդիրներ, որոնք ի վիճակի են լուծել առանձին անհատներ կամ համեմատաբար փոքր հանրություններ: Այն, ինչ քաղաքացին ունակ է նույնպիսի հաջողությամբ իրականացնել միայնակ, ընտանիքով և այլոց հետ կամավոր համագործակցությամբ, պետք է դրվի նրա վրա:
- Սոցիալական շուկայական տնտեսությունը ժխտում է ցանկացած տեսակի արտոնություն և պետական տնտեսական ղեկավարում, ինչպիսի տեսքով էլ որ այն դրսևորվի:
- Սոցիալական շուկայական տնտեսությունը ի վիճակի է բոլորի համար գործնականորեն ապահովելու.
 - անհատական ազատություն,
 - հավասար հնարավորություններ,
 - սեփականություն,
 - բարեկեցության աճ,
 - սոցիալական առաջընթաց:

Ցանկացած տնտեսական կարգի խնդիրն է հասարակության բարեկեցության ապահովումը: Սոցիալական շուկայական տնտեսությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում տարբեր տնտեսական կարգերի միջև և ապացուցել է իր կենսունակությունն ու առավելությունները բարեկեցություն ստեղծելու գործում:

Քաղաքական սխալ որոշումները հանգեցնում են գործազրկության, արժեզրկման և լճացման: Տնտեսական և սոցիալական քաղաքականությունները սերտորեն փոխկապակցված են: Տնտեսական քաղաքականությունը առանց սոցիալական արդարության ի վիճակի չէ ապահովել սոցիալական խաղաղություն ու անխուսափելիորեն հանգեցնում է ժողովրդատնտեսական կորուստների:

2.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳ

Պետական կառուցվածքային քաղաքականության խնդիրը կայանում է անձնական շահի համապատասխանեցումը հասարակական բարիքի հետ, որի հետևանքով էլ անհատական աշխատանքային ներդրումը կձառայի ընդհանուրի շահերին: Այդ նպատակով պետությունը որոշում է մրցակցության շրջանակները, երաշխավորում է համաձայնությունների ազատությունը,

սեփականության ձևերը և այդ իրավունքների սահմանները, սահմանում է աշխատանքային փոխհարաբերությունների իրավական էությունը: Այդ ամենի նպատակը հասարակական բարիքն է:

«Կարգավորված» մրցակցությունը կարելի է դասել մշակութային նվաճումների թվին: Գաղափարների ու կարծիքների մրցակցությունը առաջընթացի շարժիչն է և հասարակական փոփոխությունների խթանիչը: Մրցակցությունն ապահովում է ազատություն, բարեկեցություն և տնտեսական առաջընթաց, որով և նախադրյալներ է ստեղծվում սոցիալական բախումները կարգավորելու համար: Մրցակցությունը խրախուսելու համար կարևոր է համապատասխան օրենսդրության ստեղծումը և անընդհատ կատարելագործումը: Ընդ որում, անհրաժեշտ է տնտեսությունը ապակենտրոնացնել և դիմակայել համակենտրոնացման միտումներին, խափանել անբարեխիղճ մրցակցությունը, թույլ չտալ մենաշնորհների առաջացումը, ինչպես նաև ապահովել նոր արտադրությունների և ձեռնարկությունների մուտքը շուկա: Ֆինանսական օժանդակություն տրամադրելով առանձին ձեռնարկությունների, պետությունը չպետք է քայքայի միջին ձեռնարկությունների շուկայական դիրքերը:

Սոցիալական շուկայական տնտեսության հիմքը փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների հաշվեկշռված կառուցվածքն է:

- Բյուրոկրատական, նյութական ու ֆինանսական խոչընդոտները փոքր ու միջին ձեռնարկություններին անմրցունակ են դարձնում, իսկ նոր խոշոր արտադրությունների հետևանքով դժվարացնում նրանց մուտքը շուկա: Մրցակցության քաղաքականության էությունը կայանում է հենց նրանում, որպեսզի վերացվեն շուկայական հարաբերությունների մեջ մտնելու այդ խոչընդոտները: Փոքր ու միջին ձեռնարկություններին աջակցելը և նորերի ստեղծումը նախադրյալ է հանդիսանում դեպի շուկայական տնտեսություն կողմնորոշված մեր հասարակարգի հետագա զարգացման համար: Անհրաժեշտ է տնտեսության մեջ պետական մասնաբաժնի որոշակիացում:
- Մեծ չափանիշների մրցակցությունն անհրաժեշտ է սպառողների շահերից ելնելով: Ապրանքների ու ծառայությունների լայն տեսականին ամենից լավ է համապատասխանում մարդու բազմազան պահանջումներին: Մրցակցության համար խոչընդոտներ ստեղծող ցանկացած կենտրոնացում սահմանափակում է սպառողի ընտրության բազմազանությունն ու ազատությունը: Ընտրության ազատությունը բարելավելու համար կարևոր է ամրապնդել սպառողների դիրքերը: Դրանով ապահովվում է նաև մրցակցության պաշտպանությունը պահանջարկի կողմից: Հանուն դրա շուկան պետք է հասու մնա սպառողի համար:
- Մահմանել ազգային տնտեսության և շուկայի պաշտպանվածություն միջազգայինից, կենսապահովման առաջնահերթ անհրաժեշտության միջոցների (պարեն և այլն) համար պետական պատասխանատվություն:
- Շուկայի կարևոր տարրերից է գովազդը: Գովազդի իրավունքն ու իմաստն է տեղեկացնել ապրանքների տեսականու մասին:
- Մրցակցության և սեփականության քաղաքականությունները լրացնում են միմյանց: Մասնավոր սեփականությունը

սոցիալական շուկայական տնտեսության անկյունաքարն է, որով և էականորեն տարբերվում է մյուս հասարակական տնտեսական համակարգերից: Անձնական սեփականությունը քաղաքացուն օժտում է որոշումներ կայացնելու վճռականությամբ, դրանով էլ ընդլայնվում է նրա անձնական ազատությունը:

- Վարձու աշխատողների մասնակցությունը ձեռնարկություններում սեփականատիրական իրավունքով սոցիալական անհրաժեշտություն է հանուն այն բանի, որպեսզի նվազի տնտեսական կախվածությունը, աշխատողների վրա դրվի պատասխանատվության նրանց բաժինը և ապագայում ապահովվի եկամուտների արդարացի բաշխումը: Անհրաժեշտ է հաղթահարել տնտեսությունում առկա սեփական կապիտալի պակասը: Դրան կարելի է հասնել աշխատավորներին շահագրգռելով մասնակցելու ձեռնարկության եկամուտների բաշխման գործին և օգտագործել նրանց խնայողությունները որպես բաժնետեր, ներդնելու արտադրության մեջն այդպիսով դառնալու սեփականատեր:

Մենք ազատ արհմիությունների ու ազատ ձեռնարկատիրական գործունեության կողմնակիցներ ենք: Վարձու աշխատողներին ու ձեռնարկատերերին, արհմիություններին ու միավորումներին վճռական դեր է հատկացվում տնտեսության զարգացման և ժողովրդավարության ամրապնդման ասպարեզում:

Մեր տնտեսական քաղաքականության նպատակներն են՝

- լիակատար զբաղվածություն,
- դրամի կայունություն,
- կայուն տնտեսական աճ արտաքին տնտեսական հավասարակշռության պայմանով:

Սակայն տնտեսական աճն ինքնանպատակ չէ: Երբ տնտեսական աճը հանգեցնում է շրջակա միջավայրի ավերմանը, հարկ է ձեռնպահ մնալ այդպիսի աճից և դրա հետ կապված եկամուտների ավելացումից:

2.3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳ

Սոցիալական քաղաքականությունը ֆինանսական միջոցների պակասի ժամանակաշրջանում է, որ ապացուցում է իր կարողունակությունը:

Մարդակենտրոն կողմնորոշվածությամբ սոցիալական քաղաքականության կարևորագույն խնդիրների թվին են պատկանում՝

- պաշտպանությունը զրկանքներից և աղքատությունից,
- սոցիալական փոխհատուցումը՝ նախ և առաջ բազմազավակ ընտանիքներին,
- անհատական պաշտպանվածությունը՝ նախապես պատրաստվելով կյանքի անակնկալներին,

- բնակչության կենսապայմանների բարելավման հիմունքները:
- Արդյունաբերապես զարգացած հասարակության պայմաններում, ֆիզիկական և նյարդային ծանրաբեռնվածությունը տրանսպորտում և աշխատավայրերում հանգեցնում են դժբախտ պատահարների հավանական աճի և այլ պատճառներ, ինքնաբերաբար նպաստում հաշմանդամների ավելանալուն: Հաշմանդամները հասարակությունում փոքրամասնություն են կազմում, իսկ նրանց շահերը դեռևս բավարար չափով հաշվի չեն առնվում: Սոցիալական իրավական պետությունը բոլոր հաշմանդամներին պետք է ընձեռի համապատասխան հնարավորություն մասնագիտական ու սոցիալական ընդունակությունները բացահայտելու համար: Հաշմանդամները հոգատարության օբյեկտ չեն, նրանք գործընկերներ են: Հաշմանդամները պետք է միշտ հույս ունենան ըստ ամենայնի աջակցություն ստանալու, որի մեջ մտնում են՝ բժշկական միջոցառումների համակարգի հետագա ընդլայնումը, ակտիվ օգնության ցուցաբերումը հաշմանդամ երեխաների վերականգնմանը վաղ փուլում, հաշմանդամ երեխաների ու երիտասարդների համարհատուկ դպրոցների հիմնադրումը, ինչպես նաև մեծահասակ հաշմանդամների համար հանրակացարանների, բնակելի տների և արհեստանոցների կառուցումը: Շրջակա միջավայրի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է էլ ավելի մեծ չափով հաշվի առնել հաշմանդամների շահերը: Հաշմանդամների ազատ տեղաշարժման, հանգստի կազմակերպման և սպորտով զբաղվելու հարցում անհրաժեշտ է վերացնել շինարարական ու տեխնիկական խոչընդոտները:
- Ծերությունը, ինչպես և կյանքի ցանկացած այլ փուլ, ունի իր արժեքը, իր պահանջունքները, խնդիրներն ու պատասխանատվությունը: Հասարակությունը միայն այն ժամանակ կարող է համարվել մարդասիրական, երբ այն ի վիճակի է իր զառամյալ համաքաղաքացիներին ապահովել իմաստավորված կյանքով՝ մարդկային արժանապատվության ոգուն համապատասխան: Մեր հասարակությանն անհրաժեշտ է օգտվել զառամյալ մարդկանց ծառայություններից, կյանքի մասին դատելու նրանց ընդունակություններից, նրանց կենսափորձից, ընտանիքում և հարևանների հետ փոխհարաբերություններում ու սոցիալական ոլորտում փոխզիջում գտնելու հմտությունից: Տարեց մարդկանց հարկ է օգնել հասարակական ակտիվության էլ ավելի լայն շրջանակ յուրացնելու գործում: Ոչ թե բախումը, այլ սերունդների փոխըմբռնումը պետք է որոշի երիտասարդների ու տարեցների փոխհարաբերությունները:
- Փախստականների, հայրենադարձների, վերադարձողների ու վերաբնակիչների ներձուլումը՝ ինտեգրումը մեր տնտեսական, սոցիալական ու պետական կյանքի բոլոր ոլորտներում պետք է լինի պետության, հասարակական խմբերի ու բոլոր քաղաքացիների խնդիրը:
- Պետությունն ու հասարակությունը հիմնվում են տղամարդկանց ու կանանց համատեղ աշխատանքի վրա: Այդ իսկ պատճառով էլ կինը պետք է ոչնչով չսահմանափակվող իրավունք ունենա մասնակցելու քաղաքական, տնտեսական ու հասարակական կյանքի ձևավորմանը: Մեր հասարակությունում կնոջ համար պետք է ապահովված լինի այնպիսի տեղ,

որը համապատասխանի ինչպես իրավահավասարության սկզբունքին, այնպես էլ նրա կենսակերպի առանձնահատուկ գծերին: Այդ նպատակով տղամարդու ու կնոջ գործընկերությունն անհրաժեշտ է ապահովել ընտանիքից դուրս՝ և աշխատանքի վայրում, և հասարակական ու քաղաքական բնագավառներում: Կինը պետք է ազատ լինի՝ թե ընտանիքում, թե ընտանիքից դուրս մասնագիտական գործունեության ժամանակ, և թե երկուսի զուգակցման դեպքում, իր ընդունակությունների բացահայտման համար որոշում կայացնելիս: Կնոջ ջանքերը, որպես տնային տնտեսուհի ու մայր, պետք է ավելին համարվեն, քան այն կնոջ աշխատանքը, որը աշխատում է տնից դուրս՝ ըստ մասնագիտության: Տնային տնտեսուհու կատարած աշխատանքը և երեխաների դաստիարակությունը ըստ էության ավելին են, քան մասնագիտական գործունեությունը, այդ պատճառով էլ ենթակա են սոցիալական ապահովագրության: Ամուսնացած կանանց ու մայրերի անկախ սոցիալական ապահովագրությունը, կախված նրանց աշխատանքային ներդրումից և ընտանեկան վիճակից, պետք է երաշխավորված լինի կենսաթոշակների վճարմամբ:

- Ընտանիքի նկատմամբ հոգատարությունը ենթադրում է կնոջ առանձնահատուկ պատասխանատվությունը երեխաների դաստիարակության և ընտանեկան հոգսերը կրելու առումով, որի համար էլ այդ քաղաքականությունն իր համար պետք է ուղենիշ ունենա աշխատուժի շուկայի մեխանիզմը: Դպրոցական ու մասնագիտական կրթության համակարգը պետք է հնարավորություն տա էապես բարելավել կնոջ աշխատանքի տեղավորման գործը: Հավասար աշխատանքի դիմաց կանայք պետք է տղամարդկանց հավասար վարձատրվեն և ծառայության մեջ առաջ գնալու հնարավորությունը տղամարդկանց հետ համեմատած չպետք է սահմանափակվի:
- Իրենց երեխաներին խնամող բազմազավակ մայրերին պետք է աշխատավարձ տալ և սոցիալական աշխատողների միջոցով հսկել մոր պարտականությունների կատարումը:
- Մենք հանդես ենք գալիս տնային տնտեսուհիների որակավորման բարձրացման և վերաուսուցման կազմակերպման արդյունավետ հաստատությունների ստեղծման օգտին:

Կուսակցությունը ձգտելու է ստեղծել սոցիալական պաշտպանության այնպիսի համակարգ, որը նպաստի երկրի ներսում խաղաղ ու բարեկեցիկ կյանքի հաստատմանը:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հայաստանի գլխավոր հարստությունը երկրում բնակվող մարդիկ են: Մենք հայտարարում ենք մարդու արժանապատվության սկզբունքին մեր հավատարմության մասին: Մարդու արժանապատվությունն ու կյանքը անձեռնամխելի են: Մարդու

արժանապատվությունը կախված չէ նրա հաջողությունից կամ անհաջողությունից, ինչպես նաև շրջապատի մարդկանց դատողությունից: Մենք ցանկացած մարդու դիտում ենք որպես իր տեսակի մեջ եզակի և անկրկնելի անհատականություն:

Մարդը ստեղծված է այլ մարդկանց հետ համակեցության մեջ ազատ ապրելու և արարելու համար: Պատասխանատվություն կրելով ընձեռված ազատության համար, մարդու շնորհն ու խնդիրը կայանում է սեփական կյանքն ու շրջակա միջավայրը ներդաշնակորեն կազմակերպելու և ձևավորելու մեջ:

Տղամարդն ու կինը իրավահավասար են: Նրանց փոխհարաբերությունները կառուցվում են ամուր ընտանիք ստեղծելու և պահպանելու սկզբունքով:

Մարդկանց կարծիքների ու շահերի տարբերությունները կարող են հանգեցնել բախումների: Դրանք պետք է հաղթահարվեն ու լուծվեն փոխադարձ հարգանքի պայմաններում:

Ոչ ոք չի տիրապետում բացարձակ ճշմարտության: Այդ իսկ պատճառով էլ հարկ է դիմակայել բոլոր նրանց, ովքեր փորձում են այլոց հարկադրել իրենց սահմանափակ համոզմունքները:

Բնակչության կյանքի տևողության աճը, որակյալ բժշկական ծառայությունների և կրթության մատչելիությունը, աշխատանքի նկատմամբ մարդկանց հարգանքը, համերաշխությունը և փոխօգնությունը, մշակութային և ստեղծագործական հագեցած կյանքը, մարդու զարգացող անհատականությունը և նրա լավագույն հատկանիշները՝ հումանիզմը, բարությունը, ապրումակցումը և գթասրտությունը հասարակության այն բնորոշ գծերն են, որոնք մեր Կուսակցությունն առաջարկում է ստեղծել միասին:

3.1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջությունը բարձրագույն կենսական բարիքներից մեկն է: Առողջ լինելու կամ դառնալու հնարավորությունները պետք է բոլոր քաղաքացիների համար լինեն միատեսակ՝ անկախ նրանց ֆինանսական վիճակից, հասարակության մեջ ունեցած կարգավիճակից ու բնակության վայրից: Հիվանդը պետք է ունենա բժշկի և հիվանդանոցի ընտրության ազատություն, իսկ բժիշկն՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու ազատություն: Առողջապահության համակարգն անհնար է պատկերացնել առանց ինքնակառավարման համապատասխան տարրերի: Բժշկության բնագավառում տեխնիկական առաջընթացը հնարավորություն է տալիս մշակել բուժման նոր մեթոդներ, որոնք պետք է առանց բացառության հասու լինեն բոլորին: Սովորաբար հոգեկան խնդիրներ ունեցող անհատներին ավելի քիչ ուշադրություն է հատկացվում, քան ֆիզիկական հիվանդություններով տառապողներին: Անհրաժեշտ է հաղթահարել որոշակի հիվանդությունների թերագնահատման այդ խտրական գործոնը: Խրոնիկական հիվանդների և խնամքի կարիք ունեցողների համար կարևոր է ստեղծել կյանքի ավելի մարդկային պայմաններ: Առողջապահության բնագավառում մեր քաղաքականությունը կողմնորոշված է հիվանդությունները

ախտորոշելու, և այդ պատճառով էլ մեր հիմնական շեշտադրումներն են առողջության նկատմամբ հոգատարությունը, ախտորոշումը և առողջապահական գիտելիքների տարածումը: Սրանց թվին են պատկանում նաև բնապահպանական պայմանների մշտական բարելավումը և առողջության պահպանման նկատմամբ սեփական պատասխանատվությունը: Այս մասին պետք է մշտապես հիշել և ակտիվորեն աշխատել: Հիվանդության դեպքում պետք է գործի և իրականացվի ապահովագրությունը, որը սոցիալական ապահովագրական ինստիտուտի անքակտելի մասն է կազմում:

Պետությունը պարտավոր է բնակչության բոլոր խավերի համար երաշխավորել բժշկական օգնության առավելագույն հասանելիություն, իսկ սոցիալապես խոցելի խմբերի համար բժշկական օգնությունը պետք է լինի նաև անվճար: Բժշկական օգնության առանձին տեսակներ (ծննդօգնություն, վնասվածքաբանություն, բնածին արատների բուժում և հաշմանդամների վերականգնում, ամոքիչ բուժօգնություն և հոսպիտալին խնամք) բոլոր քաղաքացիներին պետք է տրամադրվեն պետական միջոցների հաշվին:

3.2. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթության բնագավառում քաղաքականությունը պետք է որոշվի բոլոր մարդկանց իրավահավասարության սկզբունքով, դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնվի նրանց հակումների և ընդունակությունների տարբերությունը:

Դպրոցը հանդիսանում է մարդասիրության դարբնոց, եթե ուսումը աշակերտներին ուրախություն է պատճառում և նրանց նախապատրաստում ապագա կյանքի: Այդ նպատակով դպրոցի ուսումնական գործընթացը պետք է կազմակերպվի մեծ խստությամբ: Դրա հետ մեկտեղ, դպրոցը չպետք է տեխնոկրատական խստության ուղի բռնի, դրանով անտեսելով աշակերտների հետաքրքրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ և այդպիսով խոչընդոտելով նրանց մտավոր զարգացմանը: Պետք է խուսափել ուսումնական գործընթացի շինծու ակադեմիականացումից և կոնկրետ առարկաների ծավալի չարդարացված ուռճացումից: Դպրոցական կրթությունը պարտադիր է յուրաքանչյուր երեխայի համար: Դպրոցական հաջողություններն ավելին են, քան գիտելիքների և սեփական «ես»ի դրսևորումը:

Կրթությունը կոչված է ձևավորելու նաև անձնական պատասխանատվություն, պետք է ավելին ապահովի, քան հարմարվողականությունը, մասնագիտական պատրաստվածությունը և գործառնական փոխադարձ կապերի ըմբռնումը: Կրթության նպատակն է օգնել մարդուն իր կյանքի և շրջակա միջավայրի ինքնուրույն ձևավորման գործում: Կրթության գերխնդիրը պետք է լինի ոչ թե սերտելը, այլ մտածելու կարողություններ զարգացնելը, ազգային արժանապատվության, պետական շահի գերակայության ձևավորումը, ի ծնե օժտված աշակերտների և ուսանողների հայտնաբերումը, նրանց ապագայի

հոգածության ստանձնումը պետության կողմից: Ծնողներն ու երեխաները իրավունք ունեն պահանջելու, որպեսզի կրթության բովանդակային կողմը՝ արժեքների և նորմերի համակարգով, սահմանվի հիմնական օրենքում: Դպրոցական կրթության առաջադրած խնդիրներին կարելի է հասնել միայն ծնողների, ուսուցիչների և աշակերտների սերտ համագործակցության դեպքում: Մանկավարժությունը հաջողությամբ իրականացնելու համար ուսուցիչը պետք է հեղինակություն և վստահություն վայելի: Ուսուցիչը պետք է անհատական մոտեցում ցուցաբերի աշակերտի նկատմամբ: Որակյալ և պատասխանատու մանկավարժների պատրաստումը միշտ պետք է պետության հիմնական առաջնահերթություններից առաջնայինը լինի: Կրթությունը կոչված է աջակցել ամեն մի պատանու ու աղջկա ընտրելու մասնագիտություն, որը նպաստում է անհատական ընդունակությունների բացահայտմանը և ինքնահաստատմանը: Հայ ժողովուրդը բավականին մեծ մտավոր ներուժ ունի, կարող է այն հասցնել զարգացած երկրների մակարդակին և մրցակցել նրանց հետ: Համալսարանները գիտական գաղափարների մրցակցության բեմահարթակ պետք է դառնան, այլ ոչ թե ենթարկվեն գաղափարայնացման: Ուսման գործընթացը կարիք ունի ուսումնական ծրագրերի անընդհատ և անհետաձգելի բարեփոխումների:

Մենք հանդես ենք գալիս ի պաշտպանություն մասնագիտության ընտրության գծով խորհրդատվությունների համակարգի, մասնագիտությունների լրակազմի և մասնագետ-աշխատաշուկա համագործակցության առավել սերտ շաղկապվածության օգտին:

3.3. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍ

Մշակույթի հետ հաղորդակցման շնորհիվ մարդը կյանքի մասին ձեռք է բերում խորացված պատկերացում: Մենք հանդես ենք գալիս արվեստի լայն ինքնաբացահայտման, նրա կրողներին աջակցելու, արվեստի հետ շփվելու գործում առավել շատ մարդկանց համար հնարավորություն ստեղծելու օգտին: Գրադարաններից, թանգարաններից ու թատրոններից օգտվելու հնարավորություն պետք է ունենան բնակչության բոլոր շերտերը:

Պետությունը պետք է ստանձնի մշակույթի ոլորտի երևելիներին միջազգային ճանաչման հասցնելու պատասխանատվությունը, նրանց ստեղծագործությունները շուկա հանելու, եկամտաբեր դարձնելու նախաձեռնությունը:

Մշակույթի և արվեստի ոլորտում պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինի Հայաստանի մշակութային և ստեղծագործական կյանքում քաղաքացիների (նախևառաջ՝ երեխաների, պատանիների և երիտասարդների) առավել լայն ընդգրկմանը: Դրա ապահովման համար կարևոր է մշակույթի և արվեստի ազատությունն ու գեղարվեստական բազմազանությունը: Յուրաքանչյուր քաղաքացի ունի երկրի մշակութային և ստեղծագործական կյանքի բազմազանության մեջ իր

համար առավել հետաքրքիրն ազատորեն ընտրելու իրավունք:

3.4. ԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՄԻՋԱՎԱՅՐ

Մենք հանդես ենք գալիս հանուն այնպիսի քաղաքաշինության, այնպիսի բնակարանային շինարարության, որոնք մարդու համար ապահովում են համապատասխան սոցիալական միջավայր:

Մենք հանդես ենք գալիս մեծ քաղաքների՝ հատկապես Երևանի, փոքրացման օգտին: Դրան զուգահեռ, պետք է տարածքային կենտրոնները վերափոխել քաղաքային միջավայրերի, որպեսզի նրանք դառնան կրթության, գիտության, մշակույթի և հասարակական կյանքի հավասարազոր կենտրոններ:

Քաղաքաշինությունը չպետք է խաթարի մարդու հոգեբանությունը:

Իրականացնելով քաղաքաշինություն, անհրաժեշտ է խստորեն հետևել լավորակ բնակարանային ֆոնդի պահպանմանը: Նորերի կառուցումը պետք է միանշանակ կապված լինի մարդու առավելագույն պահանջմունքները բավարարելուն, շրջակա միջավայրը ձևավորելիս նրան բնությունից չմեկուսացնելուն:

Գյուղական բնակարանային շինարարության բնագավառում մեր գլխավոր շեշտադրումը պետք է լինի գյուղի բարելավումը և նորացումը:

Սեփականատեր դառնալու ցանկությունը կապված է սեփական տուն կամ բնակարան ձեռք բերելու հետ: Սեփականատեր դառնալու հնարավորությամբ իրականացվում է մարդկային ազատության էական մասը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԺԱՄԱՆՑ

Աշխատանքը ոչ միայն կյանքի ապահովման միջոց է, այլև ինքնահաստատման ձև: Այն չի կարող փոխհատուցվել գործազրկության նույնիսկ ամենաբարձր նպաստով: Այդ պատճառով էլ արդարությունն ու մարդասիրությունը ենթադրում են աշխատանքային ոլորտում լիակատար զբաղվածություն:

Աշխատանքը մարդու համար անբաժանելի խթան է: Այն օգնում է անհատին բացահայտելու իր սոցիալական, մտավոր, գործնական և գեղարվեստական ընդունակությունները:

Սեփական փաստացի ներդրումը անհատի ազատ բացահայտման բաղադրամասն է: Յուրաքանչյուրի, այդ թվում և

հաշմանդամի համար ուժերի ներածին չափ հստակ աշխատանքային ներդրումը հանդիսանում է անքակտելի խթան: Այդ իսկ պատճառով էլ հարկ է ընդունել և ըստ ամենայնի խթանել աշխատանքի ու նախաձեռնության դրսևորման հանդեպ անհատական ձգտումը:

Մենք կանենք ամեն ինչ և կպաշտպանենք այն բոլոր ջանքերը, որոնք ուղղված կլինեն աշխատանքի անթույլատրելի ծանրաբեռնվածության և անխուսափելի դժվարությունների հաղթահարմանը:

Մենք ձգտելու ենք օրվա, շաբաթվա և ամբողջ կյանքի համար անհատի աշխատանքային ժամանակը սահմանելիս ապահովել կյանքի մի հատվածից կամ փուլից մյուսին առավել սահուն անցում: Աշխատաժամանակի ճկուն բաշխումն ու գիշերային հերթափոխների տեսակարար կշռի կրճատումը նպաստում են ընտանիքի բարեկեցությանը, խթանում են անհատի մասնակցությանը հասարակական կյանքին և ընդլայնում նրա որակավորման բարձրացման հնարավորությունները:

Մասնագիտական ինքնուրույնության միջոցով իրականացվում է ազատության վիթխարի բաժինը, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է քաղաքացիներին ոգևորել կատարելու ինքնուրույն գործողություններ: Մենք հանդես ենք գալիս մասնագիտության ազատ ընտրության օգտին:

Կուսակցությունը գերակա արժեք է դիտում յուրաքանչյուրի կապվածությունը հայրենիքին: Մարդու աշխատանքով ապահովված լինելը հիմնական երաշխիքն է հայրենիքում ինքն իրեն մարդ զգալու և հայրենիքի հետ կապվածությունը անխաթար պահելու համար: Բավարար աշխատատեղերի ստեղծումը կնպաստի արտագաղթի կտրուկ անկմանը: Հայաստանի քաղաքացին հնարավորություն կատանա իր իսկ երկրում ապահովել բարեկեցիկ կենսագործունեություն իր և իր ընտանիքի անդամների համար:

Աշխատանքը ինքնանպատակ չէ: Կարևոր ու անհրաժեշտ են նաև մարդու ջանքերը ընտանիքում, օրինակ, աշխատանքը տանը և հիվանդների խնամքը: Մարդու նախապատրաստումը ծերության նույնպես ենթադրում է մասնագիտական գործունեությունից դուրս իմաստավորված ջանքեր: Կենսաթոշակային տարիքի հասնելով մարդիկ ոչ մի դեպքում իրենց ավելորդ, հասարակությանը ոչ պիտանի չպետք է զգան:

Ժամանցը մարդուն հնարավորություն է ընձեռում աշխատանքային գործունեությունից դուրս բացահայտելու ստեղծագործական ընդունակությունները: Այն ինքնահաստատման հնարավորություն է տալիս հենց նրանց, ում աշխատանքը դրա համար սահմանափակ հնարավորություն է ընձեռում: Մարդը ժամանցի և խաղալու միջոցով հանգստանալու կարիք ունի, առանց որի ազատության ոգով տոգորված մշակույթ չի կարող ստեղծվել:

5. ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամուսնությունն ու ընտանիքը ապացուցել են, որ դրանք մարդկային համատեղ կեցության միակ և անփոխարինելի ձևերն են: Նրանք հանդիսանում են մեր հասարակության և մեր պետության հիմնաքարը:

Ընտանիքը հանդիսանում է կյանքի ու դաստիարակության միջավայր, անհատական պաշտպանվածության հիմնական կարևորագույն աղբյուր և իմաստավորված գոյության կրող:

Կրթահամակարգում, պետական ազգային գաղափարախոսական այլ համակարգերում պետք է ամրապնդել մայրության և հայրության ինստիտուտի հեղինակությունը և կին կամ տղամարդ լինելու ի բնե կանխորոշվածության կարևորության գիտակցումը:

Ընտանիքի հարցում մեր քաղաքականության հիմքը ամուսնությունն է ամբողջ կյանքի համար: Ամուսնությունը, բացի փոխադարձ սիրուց և հարգանքից, նաև գործընկերություն է, որը նշանակում է, որ ամուսինն ու կինը ճանաչում են միմյանց ներքին արժևորությունը, ընտանիքի ոլորտում՝ միմյանց վերաբերվում են փոխադարձ պատասխանատվության ոգով, մասնագիտական և հասարակական գործունեության ասպարեզում՝ իրավահավասարության սկզբունքով: Որպես ծնողներ, նրանք հավասարապես պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակության համար:

Ընտանիքը երեխայի համար առաջին և կարևորագույն դաստիարակման միջավայրն է, քանզի հենց մանկուց են դրվում հետագա կյանքի համար որոշիչ հիմքերը: Երեխայի անքակտելի իրավունքն է մեծանալ սեփական ընտանիքում, շրջապատված լինել ծնողների հոգատարությամբ և սիրով, քանզի խոսելու ձիրքը և մտավոր ընդունակությունների, անհատական ինքնատիպության և հասարակական ընդունակության ձևավորումը, արժեքային ընկալումը և պատասխանատվության զգացումը զգալիորեն կախված են ընտանեկան դաստիարակությունից:

Ծնողների երկարատև համատեղ կյանքը ենթադրում է, որ նրանք դառնում են իրենց երեխաների հուսալի ընկերները: Ով վճռում է դառնալ հայր կամ մայր, ստանձնում է լուրջ պատասխանատվություն ու խիստ պարտականություններ:

Դաստիարակության խնդիրն իր ինքնությունը գիտակցող ՀԱՅԻ վերահաստատումն է. նա արդարամիտ է, արժանապատիվ և ավանդապաշտ, ծնողներին հարգող և բազմազավակ ընտանիքի կողմնակից, աշխատասեր է, կյանքում իր ճիշտ տեղը գտնող, ազգային հարցերում անզիջում, հասարակական հարաբերություններում համբերատար և հանդուրժող, սովորող, ստեղծագործող և պրպտող է, գիտելիքներ ձեռք բերելը նրա համար գերնպատակ է, այլ ազգերի նկատմամբ համերաշխ է և որևէ առավելություն կամ ստորադասություն չի ընդունում: Անհատի ապագան և մեր հասարակության կենսապայմանները զգալիորեն կանխորոշվում են դաստիարակության ու կրթության որակով: Դաստիարակությունն ու կրթությունը անհատի բացահայտման ու կյանքում նրա հնարավորությունների արդարացի իրականացման հիմնական նախապայմաններն են: Դաստիարակությունը պետք է ներշնչի

այն միտքը, որ ազատ ու խաղաղ համատեղ կյանքի համար պահանջվում է նվազագույնս համաձայնություն:

Դաստիարակության ու կրթության հիմնախնդիրներից է երիտասարդությանը պատմական հիշողությամբ օժտելը: Պատմության իմացության արհամարումը և պատմական ուղենիշների անտեսումը հանգեցնում են հոգևոր անգործունակության: Պատմական գիտելիքների պարբերական մատուցումը նպաստում է բանիմացության խորացմանը, ազգային ինքնագիտակցության ձեռքբերմանը, գաղափարախոսական հրապույրներին դիմակայելուն: Սեփական պատմության իմացությունը օգնում է կանոնավորել մեր ընթացիկ գնահատականները, հանդուրժողականություն է հաղորդում գործելիս և նպաստում է ժամանակակից խնդիրների էլ ավելի խորը ըմբռնմանը: Ով ժխտում է իր պատմությունը, նա հարվածի տակ է դնում իր ապագան:

Պետական կառույցների համապատասխանությունը երեխաների ուսուցմանը՝ առաջին հերթին դաստիարակչական ջանքերի խորացում և ամրապնդում է ենթադրում բուն ընտանիքում: Բացի դրամական նպաստների վճարումից, սրանց թվին են պատկանում ամուսնության ու ընտանեկան կյանքին նախապատրաստվելու միջոցառումները, ընտանիքի ու դաստիարակության հարցերով խորհրդատվությունները: Բացի այդ, ենադրվում է մյուս բոլոր դաստիարակչական ու կրթական հաստատությունների մասնակցությունը՝ ի շահ ընտանիքի:

Բազմազավակ ընտանիքները, հաշմանդամ երեխայով ընտանիքները և միայն մեկ ծնող ունեցող ընտանիքները հատուկ օգնություն և աջակցություն ստանալու իրավունք ունեն:

Ընտանիքի պահպանության գործում մեր կուսակցությունն առաջնահերթ է համարում ընտանիքների բարեկեցության բարձրացման համար պայմանների ապահովումը, երիտասարդ ընտանիքներին աջակցությունը և ծնելիության խրախուսումը, ընտանիքի, մայրության, հայրության և մանկության պաշտպանությունը, բարեկեցիկ և արժանապատիվ ծերության համար երաշխիքների ապահովումը:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կյանքի բնական հիմքերի պահպանումը ազատության մի մասն է, որի համար մենք պատասխանատվություն ենք կրում: Նա, ով անպատասխանատու կերպով շահագործում է կյանքի բնական հիմքերը, խարխիլելով բնապահպանական փոխադարձ կապերը, քայքայում է սերունդների միջև համերաշխությունը: Մակայն տեխնիկական առաջընթացը և որակապես կողմնորոշված տնտեսական աճը անխուսափելի են, սրանց և մեր բնական պաշարների ու շրջակա միջավայրի պաշտպանության միջև անհաղթահարելի հակասություններ չկան:

Կյանքի բնական հիմքերի պահպանման համար անհրաժեշտ են.

- օդի մաքրության ապահովումը,
- բնական ջրային հաշվեկշռի պահպանումը,
- հրաժարումը այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել կլիմայի փոփոխության,
- պաշտպանությունը թունավոր և այլ վնասակար նյութերի աղտոտվածությունից,
- տեղանքի պաշտպանությունը և բուսական ու կենդանական աշխարհի պահպանումը,
- հումքային պաշարների հոգատար օգտագործումը,
- աղմուկի ազդեցության սահմանափակումը մինչև բնական սահմանը: Ջրի և օդի մաքրության ապահովման, աղմուկի դեմ պայքարի հարցերում հարկ է հաշվի առնել պատճառահետևանքային կապերը:

Մենք հայտարարում ենք մեր հավատարմությունը բնապահպանական միջոցառումների գերակայության նկատմամբ:

Սևանա լիճը Հայաստանի համար ավելին է, քան սովորական լիճը: Այն խմելու ջրի հիմնական ավազանն է, այդ իսկ պատճառով էլ Սևանա լիճը հատուկ ուշադրության և հոգատարության պետք է արժանանա և պահպանվի հետագա սերունդների համար: Վերջին տասնամյակներին Սևանա լիճը շահագործվել է անխնա, ոռոգման նպատակով ջրի անչափ շատ բացթողումը, անվերահսկելի ձկան որսը, լիճը կանգնեցրել են բնապահպանական աղետի եզրին: Լճից ջրի բաց թողումը պետք է հասցնել նվազագույնի, նպատակ ունենալով լճի մակարդակը բարձրացնել այն առավելագույն սահմանին, որը հնարավորություն կընձեռի արագ վերականգնել լճի կենսաբանական միջավայրը, իսկ ձկան որսը առնվազն հինգ տարով արգելել: Լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց իրականացնել առափնյա շինությունների ապամոնտաժումը և ավտոճանապարհների վերակառուցումը:

Սևանա լիճը թունավոր արտանետումներից զերծ պահելու նպատակով լճի ավազանը հայտարարել էկոլոգիապես մաքուր տնտեսական գոտի:

Կենցաղային ջրերի թափվելը կանխելու նպատակով կառուցել լիճը շրջանցող կոյուղագիծ, կամ բնակավայրերում՝ մաքրման կայաններ:

Մենք հայտարարում ենք գերակա նպատակ Հայաստանի անտառային ծածկույթի ավելացումը, այդ պատճառով էլ անտառատնկումը և անտառների խնամքը՝ համապետական և համազգային կարևորագույն միջոցառում, իսկ մատաղ սերնդի դաստիարակումը և սերը բնության նկատմամբ՝ ընտանիքի, դպրոցի և հասարակության առաջնային խնդիր:

7. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեր ժողովուրդը ցույց է տվել, որ գիտաարդյունաբերական բնագավառում մեծ ներդրում կարող է ունենալ և ստեղծել մրցունակ արդյունաբերություն: Կարևոր է, որ արդյունաբերության կառուցվածքը ուղղված լինի դեպի արտահանում:

Արդյունաբերությունը պետք է կազմի Հայաստանի տնտեսության հիմնական բաղադրիչը՝ տոկոսային հարաբերակցությամբ հասնի տնտեսության 60/70 տոկոսին:

Արդյունաբերությունն է, որ ապահովում է կայուն զարգացում, մեծ զբաղվածություն, աշխատավորների ինքնակազմակերպում, որակյալ մասնագետների առկայություն, գիտատեխնիկական զարգացում և տեխնիկական որակյալ կրթության ապահովում:

8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մեր հասարակարգը կարիք ունի արդյունավետ և մրցունակ գյուղատնտեսության, որը կոչված է բնակչությանն ապահովել առողջ ու բարձրորակ մթերքներով, որպեսզի ի դեմս համաշխարհային մասշտաբով կատարվող պարենային ճգնաժամի, սեփական պաշարներով ապահովի անհրաժեշտ պահանջարկը: Մենք հանդես ենք գալիս հանուն այնպիսի մթերքների արտադրության, հանուն այնպիսի արտադրական տեխնոլոգիաների ներդրման, որոնք օգնում են պահպանելու բնական պաշարները:

Գյուղական և անտառային տնտեսությունը պետք է նպաստի դրական հույզեր առաջացնող առողջ շրջակա միջավայրի պահպանմանը: Գյուղական շրջանների արդյունավետ զարգացման կարևոր նախադրյալ է տնտեսապես ամուր գյուղացիական տնտեսություններից կազմված գյուղատնտեսությունը՝ ձեռնարկությունների բոլոր տեսակների՝ կազմակերպորեն անկախ, կից և օժանդակ համալիրի զուգակցմամբ: Այդ իսկ պատճառով էլ, հենվելով բյուջետային համատնտեսական, ֆինանսական և ագրարային հատկացումների վրա, անհրաժեշտ է գյուղատնտեսությունը հասցնել այնպիսի վիճակի, որը տնտեսության մյուս ճյուղերի հետ համեմատած, հնարավորություն կտա փոխհատուցել անբարենպաստ բնական ու տնտեսական պայմանները:

Գյուղատնտեսության մեջ արգելել օրգանական պարարտանյութերի օգտագործումը և վնասակար արտանետումներ պարունակող արտադրությունների հիմնումը:

Գյուղմթերքի իրացման ոլորտում ձևավորել շուկայական ենթակառուցվածքներ, զարգացնել մատակարարող ու սպասարկող կազմակերպությունների ցանցը, դրանք մոտեցնել գյուղատնտեսական արտադրությանը, ակտիվացնել համագործակցությունը գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության միջև, առավելագույնս օգտագործել վերամշակող կազմակերպությունների հզորությունները, ընդլայնել արտահանումը:

9. ԳԻՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրի մշակութային, հոգևոր ու տնտեսական զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիական մշակումներին աջակցելը: Այդ իսկ պատճառով էլ գիտական և տեխնոլոգիական քաղաքականության բնագավառում պետք է սահմանվեն հեռանկարային հուսալի պայմաններ, որոնք ֆինանսական աջակցության անմիջական և անուղղակի ձևերի միջև կապահովեն հաշվեկշռված հարաբերություն: Անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել ժամանակակից գիտահենք տնտեսություն:

10. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Տնտեսական աճի, բարեկեցության և սոցիալական ապահովության համար անհրաժեշտ է հումքային ու էներգամատակարարման անխափան և ոչ թանկ համակարգ:

Առաջիկա տասնամյակում Հայաստանի տնտեսական զարգացմանը զուգընթաց կարևորագույն խնդիր է մնալու տնտեսությանը անխափան էներգիակիրներով ապահովելը:

Էներգամատակարարման ապագայի և էներգիայի ապագա պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ է ներգրավել բոլոր ավանդական և այլընտրանքային էներգիակիրները:

Առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել ջրային պաշարների առավելագույն օգտագործմամբ հիդրոկայանների կառուցմանը և նրանց լայն ցանցի ստեղծմանը: Այս գործում պետք է ներգրավել ժողովրդական լայն զանգվածների ներդրումները:

Ինչպես նաև արևային էներգիայի առավելագույն օգտագործման ուղիների՝ էլեկտրաէներգիայի արտադրման, ջրատաքացման, սննդի մշակման և նրանց լայն ցանցի ստեղծման և արտադրության կազմակերպման առումով: Բացի այդ, անհրաժեշտ է մշակել նոր տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն հումքի ու էներգիայի առավել խնայողական օգտագործումը:

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մենք համոզված ենք, որ ազատության պայմաններում մեր ներքին ու արտաքին քաղաքականության հիմքը պետք է

հանդիսանա խաղաղության ու ժողովուրդների փոխըմբռնման նկատմամբ կամքի դրսևորումը:

Մեր հիմնական նպատակն է՝ Հայաստանից բաժանված տարածքների վերամիավորումը, Այսրկովկասում կայուն խաղաղության հաստատումը և Այսրկովկասի ազգերի միավորումը մեկ միասնական տնտեսա-քաղաքական համագործակցության մեջ, ուր կկառուցվի կայուն և մարդու համար արժանի միջազգային կարգ, որը կոչված է մարդկանց համար ապահովել ազատության ու համերաշխության առավելագույն հնարավորություն:

Մենք ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում հանդես ենք գալիս հանուն մարդու իրավունքների համընդգրկուն իրականացման:

Միջազգային ընդունված իրավունքը ազգային խմբերին պետք է ապահովի հայրենիք, մայրենի լեզու և մշակույթ ունենալու իրավունքով:

Մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները և ազգերի ինքնորոշման իրավունքը ամբողջ աշխարհում արժանի էգերակայության՝ սահմանների անձեռնմխելիության (տարածքների ամբողջականության) սկզբունքի նկատմամբ:

11.1. ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը անմիջական դրացին է Մերձավոր Արևելքի երկրների և բնականաբար պետք է ակտիվ քաղաքականություն վարի այդ երկրների հետ:

Մենք ձգտում ենք խաղաղ ապրել ոչ միայն մեր անմիջական սահմանակից երկրների՝ Թուրքիայի և Իրանի, Ադրբեջանի և Վրաստանի, այլև Մերձավոր Արևելքի բոլոր պետությունների հետ: Այդ իսկ պատճառով էլ Հայաստանը պատրաստ է ազնիվ համագործակցության Մերձավոր Արևելքի բոլոր երկրների հետ: Չնայած պատմականորեն գոյություն ունեցող որոշակի լարվածությանը մեր հարևանների հետ, մենք ձգտում ենք անարգել հարաբերություններ հաստատել բոլոր ժողովուրդների հետ: Մենք առանձնահատուկ նշանակություն ենք տալիս այլ երկրների և մեր ժողովուրդների շփումներին, ամենից առաջ երիտասարդության շրջանում հարաբերությունների հաստատմանը: Պատմականորեն կատարվածի, մեր ժամանակների խնդիրների ու նվաճումների փոխադարձ, նախապաշարումներից զերծ ըմբռնումը նպաստում է անվստահության հաղթահարմանը և մերձավորարևելյան միասնական շահերի գիտակցմանը:

Մենք պետք է ակտիվացնենք մեր մերձավորարևելյան քաղաքականությունը ի շահ խաղաղության և օգտակար տնտեսական համագործակցության:

Համագործակցությունը կարող է հաջող լինել միայն այն դեպքում, երբ կհարգվեն իրավահավասարության, փոխադարձ շահավետության և պարտավորությունների փոխադարձ կատարման սկզբունքները, ինչպես նաև, երբ կկատարվեն կնքված

համաձայնագրերը և ստանձնած պարտավորությունները:

Մեր մերձավորարևելյան քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի կայուն ու արդարացի խաղաղությունը:

Մենք կողմնակից ենք մերձավորարևելյան տարածաշրջանային ոչ ռազմաքաղաքական կառույցների ստեղծմանն ու ռազմավարական համագործակցության հիմնադրմանը:

11.2. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անվտանգությունը ազգային և պետական շահերի պաշտպանվածության աստիճանն է արտաքին և ներքին սպառնալիքներից: Այդ շահերի հիմքում պետք է լինի դաստիարակված քաղաքացին և դաստիարակված անհատն, ով անտարբերությամբ և անգործությամբ չի վերաբերվի պետականաշինության գործին:

Անվտանգության խնդիրներից ելնելով պետք է հենվել ոչ միայն միջազգային ամուր կապերի, այլ նաև բնական դաշնակիցների վրա: Պատերազմը ցույց տվեց, որ բնական դաշնակիցների դերում կարող են հանդես գալ Պարսկաստանը, Հունաստանը, Սիրիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Ֆրանսիան և այլն, ովքեր Հայաստանի հետ տնտեսական կապետով առանձնակի պարտավորություններ չունենին:

Պետության անվտանգության գրավականը նոր սերնդի հզոր բանակն է, ինչն իր մեջ ներառում է բանակի արմատական վերակազմավորում և վերազինում: Բանակը հասարակության հայելային արտապատկերումն է: Ստեղծելով կարգապահ և պրոֆեսիոնալ բանակ, որն ունակ կլինի մարտական գործողություններ վարել հակառակորդի տարածքում՝ մենք հնարավորություն կունենանք դիմակայել պետական և ազգային անվտանգությանն ուղղված գլոբալ և տարածաշրջանային մարտահրավերներին: